ամի առաջնորդութեան իմոյ ի Նահանգն Թրակացւոց ի քաղաքն Թէքիրտաղի...արդ աղաչեմ յիշել ի տէր...զծնողս իմ զհայրն իմ՝ զկեսարացի Թոսունենց Արզուման գալֆան» (Պտմ. Հայ Դպր. էջ, 142)։ Կաթ. Ամենայն Հայոց (1734-1737), ունի կոնդակ մը (ՍԻՕՆ 1877, էջ 49-53. 73-77), որմէ կը հասկցուի որ իր տեղը Առ. կը նշանակէ իր ձեռնասուն՝ Յովհաննէս Արքեպսը. 1734'ին։ Աբրահամ կաթողիկոս ունի երկասիրութիւն մը Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նաստ Շահին Պարսից խոբագրով Բ. տպ. ի Ս. Էջմիածին. 1870։ Պրոսէ նոյն գործը թարգմանած է ֆրանսերէնի (Collection des Historiens Arméniens. Tome II. էջ. 257-337)։ Կրետացին ընդօրինակած է (1772) նաև ի Ս. Յակոբ, Նոտրագիր Մայր Մաշտոց մը, Առաքել Սիւնեաց եպիսկոպոսի, Մատթէոս և Տիրատուր վարդապետաց քարոզներովն, ըստ խնդրանաց Լիսնայ իշխան Աբիսողոմի (էջմ. Ցուց. Թ. 956 էջ 138.)։

ԱԲՐԱՀԱՄ ԿԹՂ. ԽՕՇԱԲԵՑԻ.—Աչակերտ և մօրեղբօրորդի Շղթայակիր Գրիգոր պատրիարքի (իր մասին տեսնել ՄՁ. Թ. 532)։ Առաջնորդ Մշոյ, ուխտաւորութեամբ կ'այցելէ 1727ին Ս. Յակոբ, Ս. Յարութեան տաճարի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն Յովհ. Մկրտչի սեղանին համար կը նուիրէ պատկեր մը հետեւեալ յիշատակարանաւ, «Յիշատակ է սբ. պատկերքս Մշոյ սբ. Կարապետի առաջնորդ Աբրահամ աստուածաբան վարդապետին ի սբ. յերուսաղէմ ի մէջ Ս. Յարութեան, ի խորանն սրբոյն Յովհաննու Մկրտչին ի պատրիարքութեան Գրիգորի վարդապետին ի թվին ՌՃՀԷ (=1728) ամին, յիշեցէք ի Քս.»։ Խոշաբեցիի յիշատակին կայ նաեւ Ս. Յակոբի տանիքին վրայ Սուրբ Հոգի մատրան կից սենեկի պատին դուրսը խաչքարի մը սա՛ արձանագրութիւնը. «ի թվին ՌՃՀԶ (=1727) ամին կանգնեցաւ սբ. խաչս բարեխօս առ Ա.Ծ. վս. տն. Յովհաննու պարգ. վրդպի սրբոյ աթոռոյս սպասաւորի, և տն. Աբրահամու դիտի Մշոյ սբ. կարապետի, ծնողաց նց. յիշեցէք ի տր. և Ա.Ծ. ողորմի ասացէք ամէն»։ Խոշաբեցին կթղ. Ամենայն Հայոց (1730-34)։ Սուրբ Կարապետի վանքին ընծայած յիշատակաց համար (ՄՁ. Թ. 532)։

ԱԲՐԱՀԱՄ (ՄՀՏ.) ՀԱԶԱՐԱՊԵՏԵԱՆ ՍԱՐԳՍՈՎ, ԱԽԼՑԽԱՑԻ ԵՒ ՄՀՏ. ՇԱՀԶԱՏԻ ՆԱԽԻՋԵՒԱՆՑԻ.—Ուխտաւորութեամբ կ'այ-